Funded by
the European Union

Open
Government
Partnership

ACSES
ARMENIAN CENTER FOR
SOCIO-ECONOMIC STUDIES

1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2023

Բովանդակություն

Ամփոփագիր →

Ներածություն →

Բյուջեի եկամուտները →

Բյուջեի ծախսերը →

Հիմնական բյուջետային ծրագրերը →

Բյուջեի համապատասխանությունը կառավարության ծրագրին →

Ամփոփագիր

Սույն ուսումնասիրության հիմնական եզրահանգումներն են՝

- 2023 թվականի առաջին կիսամյակում նպաստավոր մակրոտնտեսական միջավայրի շնորհիվ Հայաստանի պետական բյուջեն արձանագրել է **հավելուրդ**՝ 134 միլիարդ 295 միլիոն դրամի չափով:
- 2023 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեի եկամուտները կազմել են **1 տրիլիոն 161 միլիարդ դրամ**՝ 5.9%-ով ավել, քան նախնական պլանը և 18.1%-ով ավել, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, ընդ որում՝ միայն հարկային եկամուտների և պետական տուրքի դեպքում այդ աճը եղել է 18.9%:
- Դիտարկվող ժամանակահատվածում բյուջեի հարկային եկամուտների **31.2%**-ը կազմել է ԱԱՀ-ն, **24.5%**-ը՝ եկամտային հարկը և **21.4%**-ը՝ շահութահարկը:
- Զգալի գերակատարում է եղել նաև այլ եկամուտների գծով՝ **53.7%**, ինչը հիմնականում պայմանավորված է կառավարության ազատ միջոցների տեղաբաշխումից ստացված տոկոսային եկամուտների աճով:
- Զգալիորեն թերակատարվել են կապիտալ ծախսերը, կատարողականը կազմել է ընդամենը **52.6%**, ինչը հիմնականում պայմանավորված է պաշտպանության ապահովման ոլորտի հետ:
- 2023 թվականի առաջին կիսամյակում բյուջեի փաստացի ծախսերը ճշտված պլանի համեմատ կատարվել են **83.4%**-ով, թերակատարումը բացարձակ մեծությամբ կազմել է 203 միլիարդ 670 միլիոն դրամ, որի **68.2%**-ը բաժին է ընկնում թերակատարված 10 խոշորագույն ծրագրերին:
- Բացարձակ մեծությամբ առավել մեծ **թերակատարումը** արձանագրվել է պաշտպանության ապահովման (77 միլիարդ 966 միլիոն դրամ), պետական պարտքի կառավարման (12 միլիարդ 804 միլիոն դրամ) և ոստիկանության ոլորտային (9 միլիարդ 151 միլիոն դրամ) ծրագրերի դեպքում:
- 10 խոշորագույն ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2023 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ծախսերի թերակատարման **հիմնական պատճառներն են**՝ գնման գործընթացների ոչ ժամանակին կազմակերպումը, որոշակի պատճառներով կապալառուների հետ պայմանագրի խզումը, փաստացի վճարումների իրականացումը երրորդ եռամսյակի ընթացքում և այլն:
- Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը աճում է առաջանցիկ տեմպերով, քան սկզբնապես ակնկալվում էր և ենթադրաբար 2023 թվականին կկազմի **24.0%**, թեև մտահոգիչ է, որ կապիտալ ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ին զգալիորեն զիջում է 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի թիրախին (3.0%, 5.7%-ի փոխարեն):

Ներածություն

Սույն հաշվետվությունը մշակվել է ACSES վերլուծական կենտրոնի (Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն) կողմից **«Բյուջեն մերն է. բարելավելով բյուջեի հաշվետվողականությունը և թափանցիկությունը»** ծրագրի շրջանակում: Ծրագիրը իրականացվում է Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության դրամաշնորհով՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Սույն հաշվետվության նպատակն է մասնագիտական շրջանակներին և հանրությանը հակիրճ ներկայացնելու 2023 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի կատարողականը:

Հաշվետվությունը բաղկացած է ամփոփագրից, ներածությունից, չորս բաժնից:

«Բյուջեի եկամուտները» բաժնում ներկայացվել են պետական բյուջեի եկամուտների շարժընթացը վերջին մի քանի տարիներին, պլանավորված և փաստացի հավաքագրված եկամուտները 2023 թվականի առաջին կիսամյակում, եկամուտների բացվածքն ըստ հիմնական ուղղությունների:

«Բյուջեի ծախսերը» բաժնում ներկայացվել են պետական բյուջեի ծախսերի շարժընթացը վերջին մի քանի տարիներին, պետական բյուջեի ծախսերի նախնական պլանը, ճշգրտված պլանը և փաստացի կատարողականը 2023 թվականի առաջին կիսամյակում, ծախսերը տնտեսագիտական և գործառնական դասակարգմամբ:

«Հիմնական բյուջետային ծրագրերը» բաժնում ներկայացվել են բացարձակ մեծությամբ ծախսերի թերակատարմամբ առաջատար 10 ծրագրերը՝ թերակատարման պատճառների հնարավորինս մանրամասն նկարագրությամբ:

«Բյուջեի համապատասխանությունը կառավարության ծրագրին» բաժնում ներկայացվել են Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով բյուջեին վերաբերելի մի շարք թիրախային ցուցանիշներ և դրանց ընթացիկ կատարողականը:

Բյուջեի եկամուտները

Եկամուտների կատարողականը
Կատարողականը ըստ եկամուտների աղբյուրների
Հարկային եկամուտներ և պետական տուրք
Պաշտոնական դրամաշնորհների կատարողականը
Այլ եկամուտների կատարողականը

Պետական բյուջեի եկամուտների կատարողականը

Պետական բյուջեի եկամուտները, 2019-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Պետական բյուջեի եկամուտների կատարողականը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի եկամուտները կազմել են **1 տրիլիոն 161 միլիարդ դրամ**, ինչը 18.1%-ով կամ շուրջ 178 միլիարդ դրամով գերազանցում է 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացված եկամուտները և 53.0%-ով կամ շուրջ 402 միլիարդ դրամով գերազանցում է 2019 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշը:

2023 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների ծրագրային ցուցանիշի **գերակատարում**: Նշված ժամանակաշրջանում պետական բյուջեի եկամուտները **64 միլիարդ 454 միլիոն դրամով** կամ **5.9%**-ով գերազանցել են ի սկզբանե ծրագրված ցուցանիշը:

Եկամուտների կատարողականը
Կատարողականը ըստ եկամուտների աղբյուրների
Հարկային եկամուտներ և պետական տուրք
Պաշտոնական դրամաշնորհների կատարողականը
Այլ եկամուտների կատարողականը

Պետական բյուջեի եկամուտների կատարողականը

Պետական բյուջեի եկամուտների կատարողականը ըստ աղբյուրների, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի եկամուտների ծրագրային ցուցանիշի գերակատարումը պայմանավորված էր ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների առաջանցիկ աճով: Մասնավորապես, առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել **49 միլիարդ 514 միլիոն դրամ**ով կամ **4.7%**-ով ավել հարկեր և տուրքեր, քան կառավարությունը ի սկզբանե պլանավորում էր:

Այլ եկամուտները կազմել են շուրջ **53 միլիարդ դրամ՝** սկզբնական պլանը գերազանցելով 18 միլիարդ 882 միլիոն դրամով կամ 55.2%-ով:

Միևնույն ժամանակ, 2023 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է պաշտոնական դրամաշնորհների գծով ծրագրային ցուցանիշի **թերակատարում**: Նշված ժամանակաշրջանում արտաքին աղբյուրներից ստացվել է շուրջ 4 միլիարդ դրամ պաշտոնական դրամաշնորհ, ինչը մոտ **2 անգամ քիչ** է ի սկզբանե կանխատեսվածից:

Հարկային եկամուտներ և պետական տուրք

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ **1 տրիլիոն 75 միլիարդ դրամ** հարկային եկամուտ՝ **3.4%**-ով կամ շուրջ 36 միլիարդ դրամով ավել, քան ճշտված ծրագրային ցուցանիշը և շուրջ 28 միլիարդ դրամ պետական տուրք՝ 27.6%-ով կամ 6 միլիարդ դրամով ավել, քան ճշտված ծրագրային ցուցանիշը:

Ընդհանուր առմամբ, 2023 թվականի առաջին կիսամյակում հարկային եկամուտների և պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերի **31.3%**-ը կամ շուրջ 346 միլիարդ դրամ ձևավորվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, 24.5%-ը կամ 270 միլիարդ դրամ՝ եկամտային հարկի և 21.4%-ը կամ 236 միլիարդը շահութահարկի հաշվին:

2023 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով պետական բյուջեի եկամուտները աճել են **18.9%**-ով կամ շուրջ 175 միլիարդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված էր շահութահարկի (+73 միլիարդ դրամ կամ 21.4%), ԱԱՀ-ի (+58 միլիարդ դրամ կամ 31.3%) և եկամտային հարկի (+43 միլիարդ դրամ կամ 24.5%) գծով մուտքերի աճով: Պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացմանը զգալիորեն նպաստել են երկրում տնտեսական ակտիվության աճը, արտահանման և ներմուծման աճը, ինչպես նաև աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը:

Եկամուտների կատարողականը
Կատարողականը ըստ եկամուտների աղբյուրների
Հարկային եկամուտներ և պետական տուրք
Պաշտոնական դրամաշնորհների կատարողականը
Այլ եկամուտների կատարողականը

Պաշտոնական դրամաշնորհների կատարողականը

Պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արտաքին աղբյուրներից ՀՀ-ին տրամադրվել են **4 միլիարդ 104 միլիոն դրամ** պաշտոնական դրամաշնորհներ՝ 4 միլիարդ 427 միլիոն դրամով կամ 51.9%-ով պակաս, քան կառավարության ճշտված պլանային ցուցանիշը:

Գրեթե բոլոր օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից մուտքերը ստացվել են ավելի քիչ, քան կառավարությունը կանխատեսում էր:

Երկու դոնորներից, այն է՝ Ռուսաստանի Դաշնությունը և Համաշխարհային բանկը, ակնկալվող, համապատասխանաբար, 315 միլիարդ և 38 միլիարդ պաշտոնական դրամաշնորհները ընդհանրապես չեն ստացվել:

- 2023 I կիսամյակի ճշտված պլան
- 2023 I կիսամյակի փաստ
- Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ

Եկամուտների կատարողականը
Կատարողականը ըստ եկամուտների աղբյուրների
Հարկային եկամուտներ և պետական տուրք
Պաշտոնական դրամաշնորհների կատարողականը
Այլ եկամուտների կատարողականը

Այլ եկամուտների կատարողականը

Պետական բյուջեի այլ եկամուտների կատարողականը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում այլ եկամուտների գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են **53 միլիարդ դրամ**՝ 18 միլիարդ 554 միլիոն դրամով կամ 53.7%-ով գերազանցելով կառավարության ճշտված պլանը:

Կիսամյակային ցուցանիշի գերակատարումը հիմնականում պայմանավորված էր բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների կանխատեսված ցուցանիշի գերազանցմամբ: Մասնավորապես, առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 12 միլիարդ 794 միլիոն դրամով կամ **2.6 անգամ** ավել տոկոսավճարներ, քան կառավարությունը ի սկզբանե պլանավորում էր:

Եկամուտների կատարողականը
Կատարողականը ըստ եկամուտների աղբյուրների
Հարկային եկամուտներ և պետական տուրք
Պաշտոնական դրամաշնորհների կատարողականը
Այլ եկամուտների կատարողականը

Բյուջեի ծախսերը

Պետական բյուջեի հավելուրդը

Պետական բյուջեի եկամուտները և ծախսերը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի եկամուտները **գերազանցել են** ծախսերը. գրանցվել է **134 միլիարդ 295 միլիոն դրամ** հավելուրդ՝ ակնկալվող 125 միլիարդ 480 միլիոն պակասուրդի փոխարեն:

Բյուջեի հավելուրդը հիմնականում պայմանավորված էր ճշտված պլանի համեմատ եկամուտների 56 միլիարդ 105 միլիոն դրամի չափով գերակատարմամբ և ծախսերի 203 միլիարդ 670 միլիոն դրամի չափով թերակատարմամբ:

Պետական բյուջեի հավելուրդը
Ծախսերի կատարողականը
Ծախսերի ուղղությունները
Ընթացիկ ծախսերի կատարողականը
Կապիտալ ծախսերի կատարողականը
Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը
Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Պետական բյուջեի ծախսերի կատարողականը

Պետական բյուջեի ծախսերը, 2019-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Պետական բյուջեի ծախսերի կատարողականը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի ծախսերը կազմել են **1 տրիլիոն 26 միլիարդ դրամ**, ինչը 12.7%-ով կամ շուրջ 116 միլիարդ դրամով գերազանցում է 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված ծախսերը և 61.2%-ով կամ շուրջ 390 միլիարդ դրամով գերազանցում է 2019 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշը:

2023 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշի **թերակատարում**: Նշված ժամանակաշրջանում պետական բյուջեի ծախսերը **162 միլիարդ 886 միլիոն դրամով** կամ **13.7%**-ով զիջել է ի սկզբանե ծրագրված ցուցանիշը:

Պետական բյուջեի հավելուրդը
Ծախսերի կատարողականը
Ծախսերի ուղղությունները
Ընթացիկ ծախսերի կատարողականը
Կապիտալ ծախսերի կատարողականը
Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը
Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Պետական բյուջեի ծախսերի կատարողականը

Պետական բյուջեի ծախսերի կատարողականը ըստ ուղղությունների, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի ծախսերը կազմել են **1 տիլիոն 26 միլիարդ դրամ**՝ շուրջ 163 միլիարդ դրամով կամ 13.7%-ով, պակաս, քան կառավարությունը ի սկզբանե պլանավորում էր:

Բացի դրամաշնորհների տրամադրումից, բոլոր մնացած ուղղություններով պետական բյուջեի ծախսերը **թերակատարվել են** կառավարության սկզբնական պլանի համեմատ, սակայն կիսամյակային ցուցանիշի թերակատարումը հիմնականում պայմանավորված էր կապիտալ ծախսերի կանխատեսվածից ցածր ցուցանիշով:

Մասնավորապես, առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի կապիտալ ծախսերը կազմել են շուրջ 117 միլիարդ դրամ, ինչը 101 միլիարդ դրամով կամ 46.4%-ով զիջում էր սկզբնապես պլանավորած ցուցանիշը:

Պետական բյուջեի հավելուրդը
Ծախսերի կատարողականը
Ծախսերի ուղղությունները
Ընթացիկ ծախսերի կատարողականը
Կապիտալ ծախսերի կատարողականը
Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը
Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կատարողականը

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կատարողականը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի ընթացիկ ծախսերը ճշտված պլանի նկատմամբ կատարվել են **93.6%**-ով, իսկ նախնական պլանի նկատմամբ՝ **90.2%**-ով:

Առավել մեծ թերակատարում արձանագրվել է այլ ընթացիկ ծախսերի գծով՝ **80.6%**, ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գծով՝ **81.3%**, դրամաշնորհների գծով՝ **85.1%** ճշտված պլանի նկատմամբ:

Պետական բյուջեի հավելուրդը
Ծախսերի կատարողականը
Ծախսերի ուղղությունները
Ընթացիկ ծախսերի կատարողականը
Կապիտալ ծախսերի կատարողականը
Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը
Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Պետական բյուջեի կապիտալ ծախսերի կատարողականը

Պետական բյուջեի կապիտալ ծախսերի կատարողականը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Թեև 2023 թվականի առաջին կիսամյակում կապիտալ ծախսերի ճշտված պլանը վերանայվել և ավելացվել է **4 միլիարդ 162 միլիոն դրամով**, այդուհանդերձ, նախնական պլանի նկատմամբ կատարողականը եղել է բավականին ցածր՝ **52.6%,** ինչը ցույց է տալիս, որ էական խնդիրներ կան ինչպես կապիտալ ծախսերի պլանավորման, այնպես էլ կատարման մեջ:

Առհասարակ, պետք է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում կապիտալ ծախսերը շուրջ 16 միլիարդ դրամով **գերազանցել են** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, սակայն առանց ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ ծախսերի՝ պետական բյուջեի կապիտալ ծախսերի գծով գրանցվել է **1.9%** անկում:

Պետական բյուջեի հավելուրդը
Ծախսերի կատարողականը
Ծախսերի ուղղությունները
Ընթացիկ ծախսերի կատարողականը
Կապիտալ ծախսերի կատարողականը
Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը
Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը

Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կառավարության պարտքի սպասարկմանն (տոկոսավճարներ) է ուղղվել շուրջ **116 միլիարդ դրամ՝** մոտ 12 միլիարդ 800 միլիոն դրամով կամ 10.0%-ով պակաս, քան կառավարությունը ի սկզբանե պլանավորում էր: Ընդ որում ծրագրային ցուցանիշից շեղում է գրանցվել և՛ ներքին, և՛ արտաքին տոկոսավճարների մարման գծով:

Արտաքին պարտքի սպասարկման ծախսերը կազմել են շուրջ **44 միլիարդ դրամ՝** կառավարության սկզբնական կանխատեսումից 18.0%-ով կամ շուրջ 10 միլիարդ դրամով պակաս: Այս շեղումը պայմանավորված էր կանխատեսումային վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերությամբ, մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշի էական թերակատարմամբ և այլն:

Ներքին պարտքի սպասարկման ծախսերը կազմել են շուրջ **73 միլիարդ դրամ՝** կառավարության սկզբնական պլանային ցուցանիշը զիջելով 4.2%-ով կամ շուրջ 3 միլիարդ դրամով:

Պետական բյուջեի հավելուրդը
Ծախսերի կատարողականը
Ծախսերի ուղղությունները
Ընթացիկ ծախսերի կատարողականը
Կապիտալ ծախսերի կատարողականը
Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը
Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհների կատարողականը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է շուրջ **121 միլիարդ դրամ** դրամաշնորհ՝ մոտ 21 միլիարդ 230 միլիոն դրամով պակաս (-14.9%), քան ճշտված պլանային ցուցանիշը և 12 միլիարդ 400 միլիոն դրամով ավել (+11.4%) քան կառավարությունը ի սկզբանե պլանավորում էր:

Ծախսերի գերակատարումը սկզբնական պլանի համեմատ հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին աջակցության՝ սկզբնական ծրագրային ցուցանիշներից շեղմամբ: Առաջինի գծով ծախսերի մեծությունը ի սկզբանե պլանավորված չէր իսկ փաստացի ծախսերը կազմել են **19 միլիարդ 460 միլիոն դրամ** (ճշտված պլան՝ 20 միլիարդ 400 միլիոն): Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աջակցությունն ըստ սկզբնական պլանի պետք է կազմեր 2 միլիարդ դրամ, այնինչ փաստացի ծախսերը կազմել են 11 միլիարդ 858 միլիոն դրամ (ճշտված պլան՝ 12 միլիարդ 814 միլիոն):

Պետական բյուջեի հավելուրդը
Ծախսերի կատարողականը
Ծախսերի ուղղությունները
Ընթացիկ ծախսերի կատարողականը
Կապիտալ ծախսերի կատարողականը
Կառավարության պարտքի սպասարկման կատարողականը
Պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները

Հիմնական բյուջետային ծրագրերը

Բյուջեի ամենախոշոր թերակատարված ծրագրերը

Բացարձակ մեծությամբ ծախսերի թերակատարմամբ առաջատար 10 ծրագրերը, 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի ծախսերը ճշտված ծրագրի նկատմամբ թերակատարվել են **203 միլիարդ 670 միլիոն դրամով**: Թերակատարման **68.2%**-ը բաժին է հասել տաս ծրագրի:

ՀՀ պաշտպանության ապահովմանն ուղղված ծրագիրը թերակատարվել է **77 միլիարդ 966 միլիոն դրամով** կամ **30.2%**-ով:

Պետական պարտքի կառավարման ծրագիրը թերակատարվել է **12 միլիարդ 804 միլիոն դրամով** կամ **9.9%**-ով:

Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակումը, կառավարումը, կենտրոնացված միջոցառումները, մոնիտորինգը և վերահսկողությունը թերակատարվել է **9 միլիարդ 151 միլիոն դրամով** կամ **23.0%**-ով:

Ամենախոշոր 10 թերակատարված ծրագրերից տասերորդը ներդրումների և արտահանման խթանման ծրագիրն է, որը թերակատարվել է **3 միլիարդ 111 միլիոն դրամով՝** կատարվելով միայն **5.9%**-ով:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Բյուջեի ամենախոշոր թերակատարված ծրագրերը

2023թ I կիսամյակի պետական բյուջեի ամենախոշոր 10 թերակատարված ծրագրերի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Նշում՝ կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիրը 2023 թվականի առաջին կիսամյակում կատարվել է 65.2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 85.0%-ով: Ճանապարհային ցանցի բարելավմանն ուղղված ծրագիրը 2023 թվականի առաջին կիսամյակում կատարվել է 77.0%-ով իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 93.1%-ով:

Ընդ որում ընտրված ծրագրերը թերակատարվել են նաև 2022 թվականի առաջին կիսամյակում, ավելին՝ դրանց կատարման տոկոսը հիմնականում նվազել է: Օրինակ, ՀՀ պաշտպանության ապահովմանն ուղղված ծրագիրը 2023 թվականի առաջին կիսամյակում կատարվել է 69.8%-ով իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 87.8%-ով:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

ՀՀ պաշտպանության ապահովում

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

«ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագիրը Պաշտպանության նախարարության կողմից իրականացվող հիմնական ծրագիրն է, այն ներառում է միջոցառումներ ինչպես ուղղված զինված ուժերի և պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի ընթացիկ գործունեության ապահովմանը, այնպես էլ կապիտալ ծախսերին՝ շենքերի, շինությունների կառուցում, զենքի ձեռքբերում և այլն:

2023 թվականի առաջին կիսամյակում «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի շրջանակում, նախատեսված է եղել ծախսել **258 միլիարդ 278 միլիոն դրամ**, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստացի ծախսված 155 միլիարդ 643 միլիոն դրամի փոխարեն, սակայն հաջողվել է ծրագիրը կատարել միայն **69.8%**-ով, այդուհանդերձ, փաստացի կատարված ծախսերի մակարդակը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 15.8%-ով:

Ծախսերի **թերակատարումը** հիմնականում պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածում համապատասխան պայմանագրերի բացակայությամբ, գնման գործընթացի արդյունքում նախահաշվային և փաստացի կնքված պայմանգրերի գների տարբերությամբ:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Պետական պարտքի կառավարում

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

«ՀՀ պետական պարտքի կառավարում» ծրագիրը իրականացվում է Ֆինանսների նախարարության կողմից և ներառում է միջոցառումներ ուղղված պետական պարտքի սպասարկմանը, արտարժութային պարտատոմսերի միջազգային ցուցակման ծառայությունների, տեղեկատվական համակարգերի բաժանորդագրության ձեռքբերմանը և այլն:

2023 թվականի առաջին կիսամյակում «Պետական պարտքի կառավարում» ծրագրի շրջանակում, նախատեսված է եղել ծախսել **129 միլիարդ 339 միլիոն դրամ**, սակայն փաստացի ծախսվել է 116 միլիարդ 535 միլիոն դրամ՝ կատարողականը **90.1%**:

Ծախսերի **թերակատարումը** հիմնականում պայմանավորված է ԱՄՆ դոլար/ դրամ, ԱՄՆ դոլար/SDR փոխարժեքների, 6-ամսյա EURIBOR, SOFR և SDR տոկադրույքների կանխատեսված և 2023 թվականի առաջին կիսամյակում վճարների համար կիրառած փաստացի դրույքաչափերի տարբերությամբ, ինչպես նաև պարտատոմսերի նախատեսված հետգնումների չիրականացմամբ:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Ոստիկանության ոլորտի ծրագիր

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագիրն իրականացվում է Ներքին գործերի նախարարության կողմից և ներառում է միջոցառումներ ուղղված ոստիկանության ընթացիկ գործունեության և նյութատեխնիկական ապահովմանը:

2023 թվականի առաջին կիսամյակում այս ծրագրի շրջանակում, նախատեսված է եղել ծախսել **39 միլիարդ 847 միլիոն դրամ**, սակայն փաստացի ծախսվել է 30 միլիարդ 695 միլիոն դրամ (կատարողականը՝ **77.0%)**: Հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ծախսերից քիչ են եղել 12.8%-ով:

Ծախսերի **թերակատարումը** հիմնականում պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածում մատակարարումների ոչ ամբողջական իրականացմամբ, աշխատանքի վարձատրության գծով խնայողություններ կատարելու և վերանորոգման աշխատանքների գծով կատարողական ակտերի հուլիս ամսին ներկայացնելու հանգամանքներով:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Քաղաքային զարգացում

Ծրագրի կատարողականը, 2022- 2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

«Քաղաքային զարգացում» ծրագիրն իրականացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միջազգային ֆինանսական կառույցների համաֆինանսավորմամբ և ուղղված է տարբեր բնակավայրերում քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանը:

2023 թվականի առաջին կիսամյակում «Քաղաքային զարգացում» ծրագրի շրջանակում նախատեսվում էր ծախսել **13 միլիարդ 840 միլիոն դրամ**, սակայն փաստացիորեն ծախսվել է 5 միլիարդ 92 միլիոն դրամ, կամ կիսամյակի ճշգրտված պլանի ընդամենը **36.8%**-ը:

Այս ծրագրի շրջանակում ծախսերի **թերակատարման** պատճառները տարաբնույթ են, օրինակ, երկու միջոցառման դեպքում նախատեսված է եղել հաշվետու ժամանակահատվածում վարկային պայմանագիր կնքել Ասիական զարգացման բանկի հետ (ընդհ. 3.7 մլրդ դրամ), սակայն փաստացիորեն չի կնքվել: Կան դեպքեր, երբ լուծվել են կապալառուի հետ պայմանագրերը կամ վճարման պահանջագրերը ներկայացվել են հուլիս ամսին կամ առհասարակ չի հաջողվել գնում կազմակերպել: Առանձին դեպքերում նաև ի հայտ են եկել տեխնիկական խոչընդոտներ, որոնց պարագայում չի հաջողվել այս կամ այն միջոցառումը իրականացնել:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով երկրորդ տարին անընդմեջ առաջացող խնդիրները, այս ծրագիրը կարելի է համարել **խիստ խնդրահարույց**:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Ոռոգման համակարգի առողջացում

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

«Ոռոգման համակարգի առողջացման» ծրագիրն իրականացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միջազգային ֆինանսական կառույցների համաֆինանսավորմամբ և ուղղված է հանրապետության տարբեր մարզերում ոռոգման համակարգերի կառուցմանը և վերանորոգմանը:

2023 թվականի առաջին կիսամյակում «Ոռոգման համակարգի առողջացման» ծրագրի շրջանակում նախատեսվում էր ծախսել **15 միլիարդ 119 միլիոն դրամ**, սակայն փաստացիորեն ծախսվել է 6 միլիարդ 980 միլիոն դրամ, կամ կիսամյակի ճշտված պլանի ընդամենը **46.2%**-ը:

Այս ծրագրի շրջանակում ծախսերի **թերակատարման** գերակշիռ մասը՝ 8 միլիարդ 138 միլիոն դրամից 6 միլիարդ 109 միլիոն դրամը, բաժին է ընկնում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառմանը, ինչը պայմանավորված է նրանով, որ կապալառուի հետ պայմանագիրը կնքվել է միայն հունիսի 9-ին, հետևաբար աշխատանքների փաստացի կատարումը սկսվել է միայն հաշվետու ժամանակահատվածի վերջում: Մեծածավալ թերակատարում է արձանագրվել նաև Վեդու ջրամաբարի կառուցման աշխատանքներում՝ 746 միլիոն դրամ, ինչը պայմանավորված է նրանով, որ 5 կմ ոռոգման ներտնտեսային ցանցի նորոգումը իրականացնող կապալառուի ընտրության մրցույթները չեն ամփոփվել:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Հանրակրթության ծրագիր

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Հանրակրթության ծրագիրն իրականացվում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

2023 թվականի առաջին կիսամյակում «Հանրակրթության» ծրագրի շրջանակում նախատեսվում էր ծախսել **54 միլիարդ 219 միլիոն դրամ**, սակայն փաստացիորեն ծախսվել է 48 միլիարդ 60 միլիոն դրամ, կամ կիսամյակի ճշտված պլանի ընդամենը **88.6%**-ը:

Այս ծրագրի շրջանակում ծախսերի **թերակատարման** գերակշիռ մասը՝ 6 միլիարդ 159 միլիոն դրամից 4 միլիարդ 739 միլիոն դրամը, բաժին է ընկնում երեք միջոցառման: «Հիմնական համընդհանուր կրթություն» միջոցառումը թերակատարվել է 1 միլիարդ 759 միլիոն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշակերտների թվի նվազմամբ կամ որոշ դեպքերում սխալ պլանավորմամբ: ««Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովում» ծրագիրը թերակատարվել է 1 միլիարդ 548 միլիոն դրամով կամ 79.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նախատեսված 17 օբյեկտներից 10-ի մասով գնման գործընթացով պայմանավորված պայմանագրեր չեն կնքվել և հետևաբար աշխատանքները չեն մեկնարկել: «Տարրական ընդհանուր հանրակրթություն» միջոցառումը թերակատարվել է 1 միլիարդ 431 միլիոն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշակերտների թվի նվազմամբ, ինչպես նաև որոշ դեպքերում սխալ պլանավորմամբ:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիրը իրականացվում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

2023 թվականի առաջին կիսամյակում բյուջեի ճշտված պլանով նախատեսված էր այս ծրագրին ուղղել **13 միլիարդ 409 միլիոն դրամ**, սակայն փաստացի ուղղվել է 8 միլիարդ 742 միլիոն դրամ, այսինքն կատարողականը եղել է **65.2%**: Հարկ է նշել, որ թեև այս տարվա ճշտված պլանը գերազանցում էր նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ճշտված պլանը ավելի քան 40%-ով, սակայն փաստացի ծախսերը գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ծախսերը ընդամենը 7.6%-ով:

Այս ծրագրի շրջանակում **թերակատարումը** հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի հետ, մասնավորապես, 4 միլիարդ 666 միլիոն դրամ թերակատարումից 3 միլիարդ դրամը բաժին է ընկնում գիտական ենթակառուցվածքների արդիականացմանը, գիտական կենտրոնների վերանորոգմանը, սարքավորումներով վերազինմանը և համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծմանը, ինչն իր հերթին հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտական կազմակերպություններից հայտերը ստացվել են միայն հունիս ամսին: Հարկ է նշել, որ զգալի թերակատարում է արձանագրվել նաև պայմանագրային (թեմատիկ) գիտական հետազոտությունների մասով՝ շուրջ 1 միլիարդ 437 միլիոն դրամ, պայմանավորված հետազոտություններ իրականացնող կազմակերպությունների կողմից տնտեսված գումարներով, ինչպես նաև թեմաների պայմանագրերի ավարտման ժամկետներով:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Ճանապարհային ցանցի բարելավում

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրն իրականացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից՝ միջազգային ֆինանսական կառույցներից վարկային և դրամաշնորհային միջոցների ներգրավմամբ:

2023 թվականի առաջին կիսամյակում նախատեսված է այս ծրագրին ուղղել **19 միլիարդ 442 միլիոն դրամ**՝ մոտ 2.4 անգամ ավելի քիչ, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Դիտարկվող ժամանակահատվածում, այս ծրագրի կատարողականը եղել է **77.0%**, իսկ փաստացի ծախսերը 14.0%-ով ավելի քիչ, քան նախորդ տարի:

Ծրագրի **թերակատարման** հիմնական պատճառները տեխնիկական բնույթ ունեն, օրինակ, առանձին միջոցառումների մասով կապալառուների փաստացի վճարումը տեղափոխվել է երրորդ եռամսյակ կամ նրանց նկատմամբ կիրառվել է տույժ և տուգանք և այդ գումարը պահվել է վճարման ենթակա գումարից:

Ընդհանուր առմամբ, դոնորների կողմից ֆինանսավորվող միջոցառումների շրջանակում կատարողականը եղել է ավելի ցածր՝ **63.3%**:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Կենսաթոշակային ապահովություն

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Կենսաթոշակային ապահովության ծրագիրն իրականացվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

2023 թվականի առաջին կիսամյակում այս ծրագրի շրջանակում նախատեսված էր ծախսել **220 միլիարդ 896 միլիոն դրամ**՝ 25 միլիարդ 800 միլիոն դրամով ավել, քան փաստացի ծախսվել էր անցած տարի, սակայն փաստացի 2023 թվականի առաջին կիսամյակում ծախսվել է 217 միլիարդ 159 միլիոն դրամ և կատարողականը կազմել է **98.3%**:

Այս ծրագրի շրջանակում կատարողականի **թերակատարումը** հիմնականում պայմանավորված է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների հաշիվներին հատկացումների կատարողականով, որը կազմել է 95%՝ 66 միլիարդ 483 միլիոն դրամ:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Ներդրումների և արտահանման խթանում

Ծրագրի կատարողականը, 2022-2023 I կիսամյակ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ներդրումների և արտահանման խթանման ծրագիրն իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության կողմից:

2023 թվականի առաջին կիսամյակում այս ծրագրի ճշտված բյուջեն **3 միլիարդ 305 միլիոն դրամ** էր, որից կատարվել է ընդամենը **5.9%**-ը:

Թերակատարումը հիմնականում պայմանավորված է «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» միջոցառման գծով փաստացի կատարված ծախսերի բացակայությամբ (2 միլիարդ 500 միլիոն դրամ), մասնավորապես, հաշվետու ժամամանակահատվածում կառավարության որոշմամբ այս միջոցառման շահառու են ճանաչվել երկու ներդրումային նախագիծ, սակայն փաստացի վճարում չի իրականացվել առաջին կիսամյակի ընթացքում:

Առհասարակ, այս ծրագրի շրջանակում շատ են դեպքերը, երբ փաստացի ծառայությունները մատուցվել են, բայց ինչ-ինչ պատճառներով վճարումը իրականացվել է երրորդ եռամսյակի ընթացքում:

Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2023/6
Ամենախոշոր թերակատարված ծրագրերը, 2022/6-2023/6
ՀՀ պաշտպանության ապահովում
Պետական պարտքի կառավարում
Ոստիկանության ոլորտի ծրագիր
Քաղաքային զարգացում
Ոռոգման համակարգի առողջացում
Հանրակրթության ծրագիր
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագիր
Ճանապարհային ցանցի բարելավում
Կենսաթոշակային ապահովություն
Ներդրումների և արտահանման խթանում

Բյուջեի համապատասխանությունը կառավարության ծրագրին

Պետական բյուջեն և կառավարության ծրագիրը
Կառավարության պարտքը
ՀՀ հարկաբյուջետային կանոնները

Պետական բյուջեն և կառավարության ծրագիրը

ՀՀ-ում բյուջետավորման քաղաքականությունը պետք է իրականցվի առաջնորդվելով ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի առաջնահերթություններով: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեն, մասնավորապես, պետք է համապատասխանի ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի նպատակներին և թիրախներին:

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով սահմանված են ինչպես առանձին ոլորտային թիրախներ, այնպես էլ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակները: Այդ նպատակներից են.

- ենթակառուցվածքներ ուղղվող կապիտալ ծախսերի մակարդակի բարձրացում և պետական բյուջեի կապիտալ ծախսերի պլանավորման և իրականացման փուլերում առկա հիմնախնդիրների լուծում,
- կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազում՝ մինչև 2026 թվականն ապահովելով 60%-ից ցածր թիրախը, ինչպես նաև ապահովել վերադարձը հարկաբյուջետային կանոններով սահմանված պետական ֆինանսների «ոսկե կանոնների» ամբողջական պահպանմանը,
- հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավում՝ 2026 թվականին այն հասցնելով առնվազն 25 տոկոսի իսկ 2023-2025 թվականներին, ըստ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի, ապահովելով տարեկան շուրջ 0.4 տոկոսային կետով աճ և այլն:
- հասցեականություն չունեցող կամ ոչ արդյունավետ հարկային արտոնությունների կրճատում:

Կապիտալ ծախսերի կատարողականը, 2021-2023 I կիսամյակին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2021-2023 թվականների առաջին կիսամյակների ընթացքում պետական բյուջեի կապիտալ **ծախսերը աճեն են**, ինչը համապատասխանում է կառավարության ծրագրում սահմանված նպատակին: Մասնավորապես, 2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացված կապիտալ ծախսերը կազմել են շուրջ **117 միլիարդ դրամ**՝ 2022 թվականի առաջին կիսամյակի 100 միլիարդ 607 միլիոն դրամի և 2021 թվականի առաջին կիսամյակի 77 միլիարդ 735 միլիոն դրամի փոխարեն: Սակայն կապիտալ ծախսերի պլանավորման հիմնախնդիրները շարունակում են մնալ արդիական: Մասնավորապես, 2023 թվականի առաջին կիսամյակում կապիտալ ծախսերը 47.4%-ով կամ 105 միլիարդ 217 միլիոն դրամով պակաս են եղել ճշտված պլանային ցուցանիշից, իսկ 2022 թվականի առաջին կիսամյակում զիջել են ճշտված պլանային ցուցանիշը 40.7%-ով կամ 69 միլիարդ 62 միլիոն դրամով:

Պետական բյուջեն և կառավարության ծրագիրը
Կառավարության պարտքը
ՀՀ հարկաբյուջետային կանոնները

Կառավարության պարտքը

ՀՀ կառավարության պարտքը 2021-2023 թվականներին, եռամսյակի վերջի դրությամբ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2021 թվականին մեկնարկել է հարկաբյուջետային **կոնսոլիդացիայի գործընթացը**, որի նպատակն է 2022-2026 թվականներին ՀՀ կառավարության պարտքի բեռը նվազեցնել՝ հասցնելով 60%-ից ցածր պարտք/ՀՆԱ ցուցանիշի թիրախին: Ավելի կոնկրետ, նախատեսվում էր սահուն կերպով նվազեցնել կառավարության պարտքի բեռը և 2025 թվականին այն հասցնել ՀՆԱ-ի շուրջ 55.5%-ին, իսկ 2026 թվականին՝ ՀՆԱ 53.5%-ին:

2022 թվականի տարեվերջի դրությամբ պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է **46.7%**՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 13.6 տոկոսային կետով: Պարտքի բեռի նվազումը հիմնականում պայմանավորված էր ՀՀ դրամի արժևորմամբ և ՀՆԱ իրական աճով, որն իր հերթին մեծապես պայմանավորված էր արտաքին գործոնների ազդեցությամբ: Մասնավորապես, կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի 13.6 տոկոսային կետով նվազմանը 11 տոկոսային կետով նպաստել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը և 6.2 տոկոսային կետով՝ տնտեսական աճը:

2023 թվականի հունիսի 30-ի դրությամբ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ կառավարության պարտքը աճել է **109 միլիարդ 513 միլիոն դրամով**՝ կազմելով 4 տրիլիոն 79 միլիարդ դրամ: Դրա հետ միասին ՀՀ ՀՆԱ-ն ևս շարունակում է աճել:

Նշենք, որ դրամով ներգրավված պարտքի կշիռը **ավելացել է** 3.4 տոկոսային կետով, ինչը ֆինանսական կայունության ամրապնդման համար կարևոր ցուցանիշ է, այնուամենայնիվ արտաքին գործոնները շարունակում են զգալի ազդեցություն ունենալ կառավարության պարտքի դինամիկայի վրա: Մասնավորապես, եթե պահպանվեր 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ձևավորված ՀՀ դրամի նկատմամբ կառավարության պարտքի զամբյուղում ներառված փոխարկման համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքը, ապա պարտքի ծավալը կավելանար շուրջ 154 միլիարդ դրամով՝ 109 միլիարդ 513 միլիոն դրամով ավելացման փոխարեն:

ՀՀ հարկաբյուջետային կանոնները

Պետական բյուջեի հարկային եկամուտները 2021-2023/6



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Պետական բյուջեի հարկային եկամուտները 2021-2023/6



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ըստ 2022-2024 և 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի՝ կառավարությունը ակնկալում էր ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների բարելավում միջինը տարեկան շուրջ **0.4 տոկոսային կետով**: 2022 թվականին հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 22.7% պահպանվելով նախորդ տարվա գրեթե նույն մակարդակում (նվազելով 0.04 տոկոսային կետով): Ակնկալվում էր, որ 2023 թվականին հարկեր և տուրքերը կկազմեն ՀՆԱ-ի **24.0%**: 2023 թվականի առաջին կիսամյակում հարկային եկամուտներն ու պետական տուրքերն կազմել են շուրջ 1 տրիլիոն 104 միլիարդ դրամ, կամ առաջին կիսամյակի ՀՆԱ-ի 28.1%-ը:

Ըստ 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի՝ ակնկալվում է, որ 2023 թվականին պետական բյուջեի ընթացիկ ծախսերը կկազմեն ՀՆԱ **22.4%**-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ **5.7%**:

2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է **23.2%**-ը, իսկ կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը՝ **3.0%**:

Funded by
the European Union

Open Government Partnership

ACSES
ARMENIAN CENTER FOR SOCIO-ECONOMIC STUDIES

ACSES վերլուծական կենտրոն
Հասցե՝ Երևան, 0001, Մոսկովյան 3/1
Հեռախոս՝ (+374 33) 200 882
Էլ. փոստ՝ info@acses.am